ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:

Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Թել-Մել» ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Թել-Մել» ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ **«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին»** ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ուղղելու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Թել-Մել» ՓԲԸ-ին: «Թել-Մել» ՓԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե `

1. Բողոքը «Թել-Մել» ՓԲԸ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. «Թել-Մել» ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ
Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
Գտնվելու վայրը՝ 0010, ք.Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
Հեռ.՝ /010/582-321, 582-322
Էլ. հասցե՝ info@fsm.am
Ֆաքս՝ /010/582-421
Կայք՝ http://www.fsm.am/

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Թել-Մել» ՓԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «Թել-Մել» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Թել-Մել» ՓԲԸ-ն խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ Կենտրոնական բանկ
Գտնվելու վայրը՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ /010/592-697
Էլ. հասցե՝ chairman@cba.am
Ֆաքս՝ /010/565-496
Կայք՝ www.cba.am

Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Թել-Սել» ՓԲԸ-ն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ «Թել-Սել» ՓԲԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Թել-Սել» ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները:

Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Թել-Սել» ՓԲԸ միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «Թել-Սել» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք «Թել-Սել» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: